Հաշվետվություն

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն

ՀՀ կառավարության 2017թ. սեպտեմբերի 28-ի N41 «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2017 թվականի տարեկան ծրագրի և միջոցառումների ցանկի նախագծերին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման իրականացման վերաբերյալ

Հաշմանդամության ոլորտի պետական քաղաքականությունն ու նպատակային ծրագրերն ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և սոցիալական ներառմանը:

2018 թվականին շարունակվել են հաշմանդամության բնագավառի օրենսդրությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխանացնելուն ուղղված աշխատանքները:

Հաշմանդամության գնահատման համակարգում նոր մոդելի ներդրման նպատակով մշակվել և շրջանառության մեջ է դրվել կառավարության որոշման նախագծերի փաթեթ («Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականիմարտի 2-ի N276-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N780-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը): Փաթեթում ներառված իրավական ակտերի նախագծերով կարգավորվում են հաշմանդամության գնահատմանն առնչվող դրույթները, դրանք հիմնված են Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (ԱՀԿ ՖՄԴ) մոտեցումների և սկզբունքների վրա: Ներկայումս փաթեթը վերանայվում է: Մասնավորապես, քննարկման փուլում է ոլորտում համակարգային (այդ թվում՝ կառուցվածքային և կադրային) փոփոխություններ կատարելու հարցը. նախատեսվում է ներկայիս բժշկասոցիալական փորձաքննության համակարգի փոխարեն ստեղծել անձի կարիքների գնահատման կենտրոններ, որի բազմամամասնագիտական թիմը կիրականացնի անձի կարիքների բազմակողմանի գնահատում, ըստ այդմ կարիքների վերհանում՝ առաջարկելով նրա կարիքին համարժեք ծառայությունները:

2018 թվականին իրականացվող պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամներին անվճար տրամադրվել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ և այլ վերականգնողական պարագաներ: 2018թ. լսողական սարքերը և հաշմանդամի սայլակները շահառուներին տրամադրվել են պետական հավաստագրերի հիման վրա: Ընդունվել է ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N1151-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1035-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N1516-Ն որոշումը, որի համաձայն 2019 թվականից պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաները, վերականգնման աջակցող միջոցները հաշմանդամություն ունեցող և այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց տրամադրվելու են հավաստագրերի միջոցով:

Պետական աջակցություն է ցուցաբերվել «Փրկություն», «Լիարժեք կյանք» ՀԿ-ներին և «Աուտիզմ ազգային հիմնադրամին»՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին և երիտասարդներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու համար:

2018 թվակնաի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմում է 188460, որից 8193-ը՝ հաշմանդամություն ունեցող երեխա կարգավիճակով: Հաշմանդամություն ունեցող անձանց թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 4972 անձով: 2018թ. ընթացքում առաջին անգամ փորձաքննվել է 11719 անձ (նախորդ տարվա համեմատ նվազել է 757-ով), վերափորձաքննվել է 36451 անձ (նախորդ տարվա համեմատ նվազել է 12397-ով):